ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՃՈՂ ԲՈՒՅՍԵՐ, ՈՐՈՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կան շատ բույսեր, որոնք ունեն բուժիչ հատկություններ և օգտագործվում են բժշկության մեջ՝ տարատեսակ հիվանդությունների բուժման համար: Գոյություն ունեն դեղաբույսերի մոտ 2100 տեսակ, որոնցից 1500-ն աճում է ՀՀ-ի տարածքում:

Դեղաբույսերի պարունակության մեջ կան զանազան կարևոր և օգտակար նյութեր, ինչպիսիք են ՝ գլիկոզիդները, շատ եթերայուղեր, վիտամիններ, ալկալոիդներ և այլն:

Չոր դեղաբույսերից կարելի է պատրաստել բուժիչ թրմեր, օշարակներ և եփուկներ, սակայն կան բույսեր, որոնցից եթերայուղեր են պատրաստում առանց չորացնելու՝ թարմ վիճակում:

Այժմ դիտարկենք մի քանի բույսեր, նրանց օգտակար հատկությունները, քիմիական կազմը, ո՞ր հիվանդությունների ժամանակ է հարկավոր օգտագործել և որտե՞ղ են աճում:

Երիցուկ

Օշինդր

Ազնվամորի

Մասրենի

Բույսի անվանում	Աճելու վայրը	Պարունակության մեջ մտնում են՝	Թրմի օգտակարությունը
Դեղատնային երիցուկ	Դաշտեր, մարգագետիններ	Ֆիտոստերին, սալիցիլաթթու, ասկորբինաթթու, դաբաղանյութեր, եթերայուղ գլիցերիդներ և այլն:	Օգտագործվում է որպես հակաբորբոքիչ, կոկորդի, լնդի բորբոքումների և լուծի դեմ:
Դառը օշինդր	Գրեթե ամենուր, ճամփեզրեր, այգիներ	Եթերայուղեր, թթուներ, վիտամիններ, կալիումական աղեր, քացախաթթու, խնձորաթթու և այլն:	Հարկավոր է օգտագործել լյարդի և լեղապարկի հիվանդությունների համար: Նաև լավացնում է մարսողությունը և ախորժակը:
Ազնվամորի	Ձորեզրեր, բացատներ, անտառներ	Սախարիդներ, օրգանական թթուներ, աղանյութեր, վիտամին C և այլն:	Լավ է քրտնարտադրության համար և օգտագործվում է որպես ջերմիջեցնող:

Մասրենի	Լեռնալանջեր, գետահովիտներ, բացատներ	Վիտամիններ՝C, B1, K, E, B2, դաբաղիչ նյութեր, կիտրոնաթթու, խնձորաթթու, քիմիական տարրերից՝ նատրիում, մագնեզիում, երկաթ, կալիում, ֆոսֆոր, մանգան:	Օգտակար է լյարդի, լեղապարկի, միզաքարային հիվանդությունների համար:

Այժմ քննարկենք այլ բույսերի օգտակար հատկությունները.

ՈՒՐՑ

Ուրցը վայրի բույս է, որը պատկանում է շղթածաղկավորների ընտանիքին: Տարածում ունի ՀՀ-ի լեռնային և նախալեռնային շրջաններում, բլուրների վրա, տափաստանային և ալպյան մարգագետիններում, սոճու և գիհու անտառներում և այն լանջերում, որտեղ արևոտ է:

Ռուսաստանում այն անվանում էին Աստվածային խոտաբույս, որը լավացնում էր մարդկանց առողջությունը և երկարացնում կյանքը: Այս խոտաբույսը օգտագործվել է ուշագնացությունների համար, նաև, նախկինում նրանով իրականացվել են կախարդություններ:

Ուրցի պարունակության մեջ մտնում է թիմոլը, այն եթերային յուղ է, որն ունի հակասնկային և հականեխիչ հատկություն: Ուրցն օգտակար է բրոնխիտի և ասթմայի համար: Բույսի պարունակության մեջ կան դուբիլային տարրեր, որոնք ունեն հակաբորբոքիչ, ցավազրկող, արյունահոսությունը դադարեցնող հատկություններ:

Ուրցի թեյն օգտակար է ամբողջ օրգանիզմի համար: Ուրցը ոչ թե պետք է պահել մետաղյա տարրաներում, այլ հարկավոր է պահել ճենապակյա տարրաներում:

Մի փունջ ուրցի վրա պետք է լցնել եռացրած ջուր և թողնել, որ 20 րոպե թրմվի: Այս թուրմն օգտակար է

ռախիտ հիվանդությամբ տառապող երեխաներին և քնի խանգարում ունեցող մեծահասակներին:

Ուրցն ունի օգտակարություն՝ բրոնխիտի, արյան բարձր ճնշման, սկսվող հիպերտոնիայի, կատարակտի, ճիճվի և այլ հիվանդությունների նկատմամբ:

Կատարակտ.

Պատրաստուկի պատրաստման եղանակը.

Թարմ ուրցի 5 ճաշի գդալ տերևները հարկավոր է մանրացնել, լցնել 500գ հեղուկ մեղրի մեջ և խառնել: Պետք է պահել 10 օր մութ և հով վայրում: Հարկավոր է ընդունել ուտելուց 1 ժամ առաջ մեկ ճաշի գդալ:

Արյան բարձր ճնշում.

Հարկավոր է 1ճաշի գդալ ուրցը փոշիացնել, խառնել 0,5կգ մեղրին և ընդունել օրական 2-3 անգամ մեկական թեյի գդալ:

Ձիաձեթի, ուրցի իշառվույտի, ջղախոտի, սամիթի խոտերը պետք է խառնել (2:2:3:3:1) հարաբերակցությամբ: 3 ճաշի գդալ հումքը թրմեցնել 2 ժամ 400մլ եռացրած ջրի մեջ: Պետք է քամել և օրական խմել 4 անգամ 100ական մլ: Կանխում է հիպերտոնիայի սրացումը: Անհրաժեշտ է բժշկի խորհրդատվությունը:

Սկսվող հիպերտոնիա.

Պետք է խառնել ուրցի, խնկածաղկի խոտերը և երիցուկի ծաղիկը (3:2:1) 1 ճաշի գդալ ուրցը հարկավոր է թրմել 200մլ ջրում և քամել: Ընդունել օրը 3-4 անգամ 50ական մլ:

50գ չորացրած ուրցին ավելացնել 500մլ զտած ջուր, եռացնել 5 րոպե և 30 րոպե թողնել, որ թրմվի: Քամելուց հետո հարկավոր է ավելացնել 200մլ բռնչի հյութ և 150գ մեղր: Պետք է խառնել, լցնել ապակե տարաների մեջ և պահել հով տեղում: Խառնել 100մլ ջրի հետ և ընդունել օրական 1 ճաշի գդալ 2-3 անգամ:

Բրոնխիտ.

Հարկավոր է (4:1:1) խառնել ուրցը խնկածաղիկը և դաղձը: Երեկոյան պատրաստված խառնուրդից 6 ճաշի գդալ լցնել ջերմապահի մեջ և 1լ եռացրած ջրով թրմել 10 ժամ: Որպեսզի թուրմը չկորցնի իր օգտակար հատկանիշները հարկավոր է 20 օրը մեկ խնկածաղկի կամ դաղձի փոխարեն օգտագործել մասուր:

Ուրցն օգտագործում են սրտխառնոցի դեմ, ճճվաթափման լավ միջոց է, իսկ մրսածությունից առաջացած գլխացավի դեմ օգտագործում են հետևյալ կերպ՝ 4.4գ ուրցի հյութը խառնում են, քացախի, մեղրի հետ և օգտագործում:

Զգուշացում. Կառաջանա սրտխառնոց, եթե խախտվի ուրցի պատրաստուկի չափաբաժինը: Ուրցը վտանգավոր է այն մարդկանց, ովքեր ունեն ստամոքսի խոց, առիթմիա, արգելվում է նաև հղիներին:

ԿԱՏՎԱԽՈՏ (Վալերիանա)

Վալերիանա անվանումն եկել է լատիներեն՝ ‹‹valeo›› բառից, որը նշանակում է առողջ լինել, իսկ հայերեն այս բույսն անվանում են կատվախոտ, քանի որ կատուները բույսի բուրավետ ծաղիկների հոտից գրգռվում են, այն ազդում է կենդանու ուղեղի վրա: Այս բույսի ցողունը լինում է 150սմ բարձրությամբ: Քանի որ սերմերը թավուտ են, դրանք հեշտությամբ տարածվում են և սկիզբ են տալիս նոր ծիլեր: Գոյություն ունի կատվախոտի 217-ից ավելի տեսակ: Առավել հաճախ օգտագործվում է դեղատնային կատվախոտը, այն ունի սրտանոթային համակարգերը կարգավորող, մարսողությունը լավացնող, հանգստացնող գործառույթ:

ՀՀ-ի տարածաշրջանում կատվախոտը տարածվում է ցածրադիր գոտիներից մինչև բարձրադիր գոտիներ և աճում է Լոռիում, Գեղարքունիքի մարզում, Արագածոտնի մարզում, Երևանում:

Կատվախոտը պարունակում է եթերայուղ, որը հանգստացնում է ջղակծկումները, լավացնում աղեստամոքսային գործընթացները և արագացնում լեղու արտադրությունը, երկարաձգում է քնաբերների ազդեցությունները: Նյարդային համակարգի հիվանդությունների, ընկնավորության, հիպերտոնիայի առաջին փուլի, սրտի նևրոզի, միգրենի դեպքում օգտագործվում է որպես հանգստացնող միջոց:

Անքնությունից, սիրտ-անոթային համակարգի նևրոզից, նյարդային անհանգստությունից ազատվելու համար հարկավոր է պատրաստել հետևյալ թուրմը՝

5գ կատվախոտը լցնել 200մլ եռացրած ջրի մեջ, 2 ժամ պահել թույլ կրակի վրա, այնուհետև 15 րոպե թողնել, որ թրմվի և քամել: Նախնական զանգվածը պետք է լրացնել

եռացրած ջրով: Այս թուրմը հարկավոր է առավոտյան ու երեկոյան խմել գոլ վիճակում՝ մեղրի հետ:

ԵՂԵՍՊԱԿ

Տերևները պարզ են, խոշոր, հարթ: Այս բույսը հանդիպում է Հայաստանի ֆլորիստիկական շրջաններում:

Եղեսպակի մեջ կան սպիգենին և լյութեոլին, որոնք ունեն հակաբորբոքային հատկություն և ոչնչացնում են քաղցկեղային բջիջները:

Եղեսպակի օգտագործումը հայկական բժշկության մեջ.

Ամիրդովլաթ Ամասիացին գրել է, որ եղեսպակն օգնում է ազատվել մաշկային հիվանդություններից: Մաշկի ցանը, քորը վերացնելու համար հարկավոր է լոգանք ընդունել բույսի եփուկի ջրով:

Թուրմի պատրաստման եղանակը՝

2 ճաշի գդալ չորացրած և փոշի դարձած եղեսպակի վրա հարկավոր է ավելացնել 400մլ եռացրած ջուր, թողնել 30 րոպե, որ թրմվի և քամել: Պետք է օգտագործել օրական 3 անգամ 130մլ: Օգտակար է միզապարկի, լյարդի բորբոքումների, երիկամների, ստամոքսի, խոլեստերինի, աղիների, բրոնխիտի համար: Իսկ թարախային վերքերը բուժելու համար օգտագործում են ավելի խիտ լուծույթ (2 ճաշի գդալի փոխարեն 4 ճաշի գդալ):

Եղեսպակն օգտագործում են նաև, որպես հիշողությունը լավացնող միջոց:

Հարկավոր է փոշի դարձնել բույսի ծաղիկն ու տերևը, խառնել (2:1): 1 թեյի գդալ հումքը պետք է թրմել 1 ժամ 300մլ եռացրած ջրում: Ընդունել ուտելուց կես ժամ առաջ օրական 3 անգամ 100մլ:

Բուժում է նաև լնդերի և կոկորդի հիվանդությունները: Այդպիսի թուրմ պատրաստելու համար հարկավոր է մի տարայի մեջ լցնել 1 թեյի գդալ եղեսպակի տերևներ, իսկ մյուս տարայի մեջ կաղնու կեղև, ամեն մեկի մեջ ավելացնել 100մլ ջուր, եփել 10 րոպե, թրմել 30 րոպե:

Ստամոքսի խոցի բուժման համար հարկավոր է եղեսպակի և եզան լեզվի մանրացված տերևները լցնել 150մլ ջրի մեջ, խառնել, 5 րոպե եփել, իսկ թրմել հարկավոր է 1 ժամ:

Անգինայի դեմ օգտագործելու համար հարկավոր է մանրացնել 2 ճաշի գդալ չոր բույս և 4-5 պճեղ սխտոր, ավելացնել 1լ եռացրած ջուր, տարան ծածկել, 15 րոպե եռացնել ջրային բաղնիքի վրա: Հարկավոր է թրմել 45 րոպե և քամել: Ողողումները պետք է կատարվեն յուրաքանչյուր 30 րոպեն մեկ:

Մրսածության դեպքում եղեսպակի չոր, փոշի դարձած տերևները պետք է խառնել մեղրի հետ, ընդունել օրը 3 անգամ 1-ական թեյի գդալ՝ 100մլ գոլ ջրի հետ:

ՀՀ-ում մշակվում է բրազիլական փայլուն եղեսպակ՝ ծաղկեփնջեր զարդարելու նպատակով, իսկ բուժման նպատակով կիրառելու համար անհրաժեշտ է այն գնել դեղատներից:

ԱԼՈԷ

Ալոէն դեռևս հնագույն ժամանակներից օգտագործում են բժշկության մեջ: Հին Եգիպտոսում այս բույսն անվանում էին հզոր դեղաբույս: Բժշկության մեջ օգտագործվում է ալոէի արտադրած լատեքսը և գելը: Գելը դոնդողանման է, որը գտնվում է բույսի ներսում, բույսը կտրելիս այն իսկույն հոսում է:

Շատ բժիշկներ ալոէն համարում են կարևոր բույս, որը բուժում է տարբեր մաշկային հիվանդություններ:

Թվարկենք դեպքեր, որոնց ժամանակ ալոէն օգտագործվում է.

Օգտագործում են այրվածքների բուժման համար, ընդ որում երկրորդ կարգի այրվածքները ալոէի օգնությամբ բուժվում են ընդամենը 16 օրվա ընթացքում: Ալոէն իջեցնում է հիպերլիպիդեմիայով հիվանդ մարդկանց խոլեստերինի քանակը մոտավորապես 15%-ով:

Այս բույսը նաև օգտակար ազդեցություն ունի թարախաբշտիկների, խոցերի համար: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ իր անտիբիոտիկ հատկության շնորհիվ բուժում է մաշկի բշտիկները, ցաները և ունի մաշկը փափկացնող հատկություն: Նրանում պարունակող գելը փափկացնում է մազերը:

Ալոէի նյութով հնարավոր է հեռացնել ձեռքի պիգմենտները, այն նաև մտնում է մի շարք դեղերի բաղադրության մեջ:

Ալոէի հյութի օգտագործումը

Ալոէի հյութի և մեղրի խառնուրդը բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը: Հյութ ստանալու համար հարկավոր է կտրել բույսի մի քանի տերև, քամել, խառնել նույն քանակով մեղրի հետ և ընդունել օրը 3 անգամ ուտելուց առաջ 1/3 գդալ: Բուժումը տևում է 3 շաբաթ:

Հարբուխի ժամանակ հարկավոր է նրա հյութը կաթացնել քթի մեջ, բարձր արդյունք ստանալու համար դա հարկավոր է կրկնել 3-4 ժամը մեկ: Երբ ցավում է կոկորդը, հարկավոր է գոլ ջրով և ալոէի հյութով կատարել ողողումներ:

ԱՆԹԱՌԱՄ

Այս բույսը պատկանում է աստղածաղկազգիների ընտանիքին: ՀՀ-ում հայտնի է անթառամի 6 տեսակ: Այդ տեսակներն են՝ անթառամ ոսկեգույն, անթառամ Պալասի, անթառամ բուրավետ և այլն:

Աճում է բոլոր մարզերում. հատկապես տարածում ունի ժայռոտ, քարքարոտ վայրերում՝ Երևանում, Գառնիում, Որցի լեռներում և այլն:

Հայաստանում և Իրանում տարածված է ալիքանման անթառամը, որը լինում է կարմրավարդագույն կամ վարդագույն: Ալիքանման անթառամի հետ միասին աճում է նաև Հայաստանի անթառամը, որը լինում է դեղնավուն կամ սպիտակավուն, ունի կանաչ շերտեր: Դրանք երկուսն էլ մանրէասպան են և ունեն բուժիչ հատկություն:

Ցողունի բարձրությունը լինում է 15-30սմ, նաև կարող է հասնել մինչև 1մ-ի: Պալասի անթառամը, որը գրանցված է կարմիր գրքում, մեծ տարածում ունի Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի լեռնային, քարքարոտ հատվածներում: Բույսի ծաղիկներն ունեն միզամուղ հատկություն:

Շնորհիվ բույսի հակաբորբոքային հատկության, անթառամն օգտագործում են լյարդի, լեղապարկի, միզապարկի բուժման համար:

Բուժման համար օգտագործվում են նրանց ծաղկազամբյուղները, որոնք իրենց պարունակության մեջ ունեն եթերայուղեր, խեժեր, օրգանական թթուներ, լորձեր, C և K վիտամիններ և այլն:

Եփուկի պատրաստման եղանակն է՝

3 ճաշի գդալ անթառամի ծաղիկները լցնել էմալե կաթսայի մեջ, վրան լցնել 1 թեյի բաժակ եռման ջուր, այնուհետև հարկավոր է փակել կափարիչը, եփել 30 րոպե և անընդհատ խառնել: Դրանից հետո պետք է պահել սենյակային պայմաններում, որ հովանա, քամել և որպեսզի եփուկի քանակը դառնա 200մլ, նրա վրա լցնում են համապատասխան քանակությամբ եռման ջուր: Հարկավոր է ընդունել ուտելուց 15 րոպե առաջ օրը 2 անգամ:

Ջրաթուրմի պատրաստման եղանակն է՝

5գ մանրացված անթառամի ծաղիկների վրա լցնել 500մլ սառը ջուր և թողնել որպեսզի թրմվի 8 ժամ: Խմել օրական 3-4 անգամ:

ՄԱՏՆՈՒՆԻ ԾԻՐԱՆԱՎՈՐ

Ամուլսարի ոսկու հանքավայրերի ուսումնասիրություններից պարզվել է, որ 2450մ բարձրությունից ցածր, հարավ-արևմտյան հատվածում, քարքարոտ վայրերում, աճում են մոտ 7500 մատնունի ծիրանավորի առանձնյակներ: ՀՀ կառավարության որոշմամբ, մատնունու 1500 առանձնյակներ տեղափոխվեցին Սևանի բուսաբանական այգի:



Մատնունի ծիրանավորը բազմամյա բույս է, ունի 6-15սմ բարձրություն, նրան բնորոշ է հաստ գլխավոր արմատի առկայությունը:

Պտուղը բազմաընկուզիկ է: Աճում է Գեղամա և Զանգեզուրի ֆլորիստական շրջաններում:

Տարածում ունի նաև ծովի մակերևույթից 3300-3500մ բարձրության վրա՝ Ալպյան գոտում: Ծաղկման շրջանն է՝ հուլիս-օգոստոս, իսկ պտղաբերմանը՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսները: Ցավոք, հիմա հայտնի չէ տվյալ բույսի

քիմիական բաղադրությունը, սակայն մատնունու շատ տեսակներ ունեն բուժիչ հատկություն, ինչպես **սպիտակ մատնունին:**

ՍՊԻՏԱԿ ՄԱՏՆՈՒՆԻ

Այս բույսն ունի 10-15սմ բարձություն: Տերևների ստորին մասը սպիտակ առսերմ, իսկ վերին մասը մուգ կանաչ է: Մեկ ցողունի վրա կարող են դուրս գալ 5-15 սպիտակ ծաղիկներ, դրանով իսկ տարբերվում են ճնշող մեծամասնությունը կազմող դեղին տեսակներից: Ծաղկեպսակները հինգն են, իսկ տրամագիծը 3սմ է: Մատնունիի ծաղկման շրջանը մայիս-հունիս ընկած ժամանակահատվածն է, իսկ պտղաբերման շրջանը՝ հունիս-հուլիս ժամանակահատվածը:

Դեղաբանական նկարագիրը.

Սրտի ռիթմերը կարգավորման, ճնշման իջեցման, արյունատար անոթների էլաստիկության, աղիների աշխատանքի կարգավորման և այլ կարևոր գործընթացների համար օգտագործում են վերգետնյա հատվածից և արմատից ստացված պատրաստուկը:

Հումքի մթերում.

Հարկավոր է հավաքել բույսի վերգետնյա մասը, չորացնել, իսկ արմատը հավաքել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, երբ վերգետնյա մասը չորացած է լինում, կամ կոթունները դուրս գալու ժամանակ՝ գարնանը:

Պետք է չորացնել 60^{0}C ջերմաստիճանի տակ: Հումքը պահում են հով տեղում՝ թղթերով փաթաթված տուփերի մեջ: Խոտը կարելի է պահել մինչև 2 տարի, իսկ արմատները՝ 3-5 տարի:

Մատնունին ունի աղիների տոնուսը բարձրացնող, կաթվածի զարգացումը կանխարգելող, իմունային համակարգն ամրացնող ֆունկցիա:

Ոգեթուրմ պատրաստելու համար հարկավոր է բաժանել 5-10մմ մասերի, 50գ մատնունին 500մլ 40%-անոց սպիրտի մեջ պետք է պահել 21 օր մութ վայրում, իսկ հետո հարկավոր է քամել: 2-րդ անգամ նույն հումքը կարելի է թրմել սպիրտի 400մլ լուծույթի մեջ: Ոգեթրմերը զտել, նրա 30 կաթիլը պետք է լուծել 100մլ ջրի մեջ, ընդունել օրը 3 անգամ, ուտելուց 20 րոպե առաջ: Բուժման նպատակով օգտագործել 1 ամիս և կրկնել 7 օրից: Քրոնիկ հիվանդությունների բուժումը տևում է 3-6 ամիս:

Թուրմ պատրաստելու համար վերցնել 2 ճաշի գդալ թարմ, սպիտակ մատնունի, եթե չոր է, ապա 1 ճաշի գդալը բավական է, լցնել 200մլ եռացած ջրի մեջ, թրմել 8-10 ժամ, այնուհետև քամել: Ընդունել օրը 4 անգամ ուտելուց առաջ, ամեն անգամ 50մլ:

Պետք է զգուշանալ թուրմի հակառակ ազդեցությունից, եթե օգտագործվում է ստույգ չափաբաժնով կարող է վնասակար լինել հիպերտոնիայի համար: Դրանից խուսափելու նպատակով պետք է օգտագործել կրկնակի պակաս չափաբաժնով, սակայն այդպես բուժման ժամկետը երկարում է:

Այսօր պարզ չէ սպիտակ մատնունին, մատնունի ծիրանավորի պես աճում է Հայաստանում թե ոչ:

ԵԶԱՆ ԼԵԶՈՒ

Եզան լեզուն ժողովուրդը բժշկության մեջ օգտագործել է դեռևս հին ժամանակներից՝ տարատեսակ հիվանդությունների բուժման նպատակով: Այն օգտագործել են կապույտ հազի, աղեստամոքսային տրակտի, բրոնխիտի, թոքերի պալարախտի բուժման համար: ՀՀ-ում եզան լեզուն աճում է գրեթե բոլոր մարզերում:

Աճում է Արագածոտնի, Լոռու, Տավուշի, Սյունիքի և այլ մարզերում, իսկ եզան լեզու մեծ և եզան լեզու նշատերևը տարածված են բոլոր մարզերում:

Մխիթար Հերացին եզան լեզվի սերմերը տրորել, խառնել է գազ և օձագալար բույսերի խեժահյութերի հետ և օգտագործել կարմիր քամու, այրվածքների և ֆլեգմոնայի դեմ:

Ամիրդովլաթ Ամասիացին նշել է, որ այս բույսի սերմերն ու տերևահյութն օգտակար են երիկամների, լյարդի, սիբիրախտի և մի շարք այլ հիվանդությունների համար, նաև վերացնում է դեղորայքային թունավորումները: Եզան լեզվի թարմ հյութն օգնում է բուժել եղջերաթաղանթի վրա գոյացած վերքերը:

Կիրառման եղանակները.

Հարկավոր է 10գ չորացրած բույսը թրմել 200մլ եռջրի մեջ 1 ժամ: Այն պետք է ընդունել 1 ճաշի գդալ, օրական 3-4 անգամ: Նաև պատրաստում են վերցնելով 1 թեյի գդալ չորացրած տերևները և ցողունը, լցնում 1 թեյի բաժակ եռացրած ջրի մեջ, թրմում 15 րոպե: Ընդունում են 1 ճաշի գդալ, օրը 3 անգամ:

Թարմ հյութ պատրաստելու համար հարկավոր է լավ լվանալ բույսի տերևները, աղալ, քամել և խառնել գոլ ջրի հետ (1:10), ավելացնել մեղր ըստ ճաշակի: Այս թուրմը հարկավոր է խմել օրը 3 անգամ՝ 1 ճաշի գդալ:

Կարելի է պատրաստել սերմերից սպեղանի: Այդ նպատակով հարկավոր է վերցնել դեղաբույսերի տրորված սերմերը (1:2), աղի, խոզի ճարպի ու հացի միջուկի հետ խառնել և դնել թարախապալարին:

Եզան լեզուն օգտակար հատկություններից բացի նաև ունի վնասակար ազդեցություններ: Օրինակ՝ խիստ հակացուցված է այն մարդկանց, ովքեր ունեն ստամոքսի բարձր թթվայնություն: Նաև պետք է տալ անալիզներ՝ հասկանալու համար թրոմբոզի հակումներ ունի տվյալ մարդը թե ոչ:

Այժմ խոսենք այն 5 հիվանդությունների մասին, որոնք ևս բուժվում են եզան լեզվի օգնությամբ.

Մրսածություն	Փորկապություն	Վերքերի բուժում	Մարսողություն	Նիկոտինի կախվածության դեմ պայքար
Եզան լեզուն օգնում է բուժել հազը և մրսածությունը: Բարձր ջերմության ժամանակ պատրաստում են խոտաբույսերով թեյ, որը պարունակում է եզան լեզու և ազնվամորի:	Հարկավոր է 5 թեյի գդալ եզան լեզվի սերմերի վրա լցնել ¼ եռացրած ջուր, թողնել, որ 1 ժամ թրմվի, այնուհետև քամել և ընդունել 2 թեյի գդալ սնվելուց առաջ:	Եզան լեզվի հյութի շնորհիվ վերքից թարախ շուտ է դուրս գալիս և բորբոքվածությունը անցկացնում է:	Աղիների և ստամոքսի աշխատանքը լավացնելու համար հարկավոր է մանր կտրտած 3 թեյի գդալ տերևները լցնել 250 մլ եռացրած ջրի մեջ: 8 ժամ թոնելուց հետո պետք է ընդունել ուտելուց առաջ 1 ճաշի գդալ օրը 3 անգամ:	Նիկոտինի կախվածությունից ազատվելու համար հարկավոր է եփել բույսի տերևները և ընդունել օրը 3 անգամ:

ԵՂԵՐԴԱԿ

Եղերդակը Հայաստանում ճանաչում ունի նաև ճարճառ, ճարճռտուկ, հեղերդակ, հնդիպե, հյուղերդակ, ճարճատուկ անվանումներով: Եղերդակը բարդածաղկավորների ընտանիքին պատկանող, 60-120սմ բարձրություն ունեցող բույս է: Ծաղիկները լինում են

կապտավուն կամ սպիտակ, նրանց արմատները դառն են, սակայն հյութալի: Պտուղների հասունացման ժամանակահատվածն է օգոստոս-հոկտեմբեր ամիսները: Եղերդակը սերմերով բազմացող բույսերից է, այն աճում է առվի ափերին, ճանապարհեզրերին, անտառներում:

Այս բույսը մեծ մասամբ տարածված է Հայաստանում, Ուկրաինայում, Բելորուսում, Կովկասում: Հայաստանում այն անվանվում է մեղրատու բույս: Բուժիչ նպատակով օգտագործում են, և՛ բույսն ամբողջությամբ, և՛արմատները:

Եղերդակի արմատների պարունակության մեջ են մտնում խեժեր, թթուներ, դաբաղանյութեր, շաքարներ, C և B խմբի վիտամիններ և այլն:

Հայ հռչակավոր բժշկագետ Մխիթար Հերացին տվել է այնպիսի դեղատոմսեր, որոնք բուժում են դեղնախտը, այտուցը ու սակավարյունությունը:

Երիկամների, լյարդի, ստամոքսի ցավերի, շաքարախտի բուժման նպատակով անհրաժեշտ է օգտագործել եղերդակի դեղամիջոցները:

Դեղամիջոց պատրաստելու համար հարկավոր է եղերդակի արմատը կամ հենց ծաղիկը 15 րոպե եռացնել (հարաբերությունը 1:10), ընդունել օրը 3 անգամ 1ճաշի գդալ:

Եղերդակի արմատներից պատրաստում են ըմպելիք: Մարդիկ հասկանալով սուրճի վնասակար ազդեցությունը, այն փոխարինում են այս ըմպելիքով, որն օգտակար է շաքարային դիաբետ ունեցող մարդկանց համար:

Եղերդակի քիմիական կազմի մեջ մտնում են այնպիսի կարևոր հանքանյութեր, ինչպիսիք են՝ կալցիումը, մագնեզիումը, կալիումը և A, C, E, B_1, B_2, B_3 վիտամինները:

Բույսն ունի ճիճվաթափելու, լեղամուղ, միզամուղ հատկություններ: Արմատի եփուկով լոգանքն օգտակար է գեղձախտի և հոդաբորբոքումների համար:

Հայաստանում, բժշկության մեջ, եղերդակի արմատներից պատրաստած հյութն օգտագործում են լյարդի հիվանդությունների և երակների խցանման դեպքում:

ԴԱՂՁ

Հին ժամանակներից մարդիկ դաղձը օգտագործում էին բուժման նպատակով, ինչը պայմանավորված էր նրանում առկա մենթոլով և այլ օգտակար բաղադրիչներով:

Դաղձի յուղ

Այն ստացվում է մենթոլից, մենթոլը հպվելով մաշկին սառեցնում է մաշկը և դրա հետևանքով նեղանում են արտաքին արյունատար անոթները, իսկ ներքին օրգանների անոթները լայնանում են: Դաղձի յուղն ունի հականեխիչ հատկություն:

Դաղձը բժշկության մեջ կիրառվում է լեղապարկի և լյարդի հիվանդությունների բուժման համար:

Օրգանիզմը խարամներից մաքրելու, լեղաքարային հիվանդությունները բուժելու համար օգտագործում են այս բույսից պատրաստված թուրմեր, եփուկներ և դեղապատրաստուկներ:

Թուրմ պատրաստելու համար հարկավոր է ծաղկման շրջանի սկզբում հավաքված դաղձի տերևներն ու ծաղիկները չորացնել, 1 ճաշի գդալ չոր բույսը լցնել 1 բաժակ ջրի մեջ, թրմել թերմոսի մեջ մեկուկես ժամ ու ընդունել օրը 4-5 անգամ 1 ճաշի գդալ:

Դաղձի թեյ պատրաստելու համար հարկավոր է մի քանի թարմ տերևներ գցել թեյի մեջ կամ կարելի է ուղղակի եռացրած ջրի մեջ գցել: Երկար ժամանակ թրմելու դեպքում թեյը կունենա դառը համ:

Դաղձն օգտակար է արյունատար անոթների համար, այն իջեցնում է անոթային ճնշումը, հանգստացնում է գլխացավը և սրտխփոցները: Սրա միջոցով կարելի է ազատվել անքնությունից ու նաև լավ նյարդերը հանգստացնող միջոց է:

Դաղձի ջրային թուրմով կարելի է կատարել ողողումներ, որի միջոցով կթարմանա շնչառությունը, բորբոքային գործոնթացները կդադարացվեն և կոչնչանան բակտերիաները: Այն օգտագործում են՝ անգինայի, ֆարինգիտի և այլ հիվանդությունների ժամանակ, որպես քրտնաբեր և հովացնող միջոց: Օգտագործում են նաև միզասեռական և շնչառական համակարգերի բորբոքումները բուժելու նպատակով:

ՍՐՈՀՈՒՆԴ

Պատկանում է սրոհունդազգիների ընտանիքին: ՀՀ-ում հայտնի է 11 տեսակ՝ սրոհունդ խոցված, ալպիական, անհարթ, սրածայր և այլն:

Սրոհունդը տարածում ունի Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի և այլ մարզերում: Բացի սրոհունդ անվանումից այն ունի նաև այլ հայկական անվանումներ՝ արևքուրիկ, հիպերիկոն, մկան աղիք, հոտմոտ, պոպղակ, հազարածաղիկ:

Ցողունն ունի 15-100սմ բարձրություն՝ կանգուն է, վերևի մասում ճյուղավորվում է: Ծաղկման շրջանը հունիս-սեպտեմբեր ամիսներն են:

Սրոհունդի որոշ տեսակներ դեղաբույսեր են: Բժշկության համար օգտագործում են բույսի վերգետնյա մասը, այն հարկավոր է կտրել առանց կոշտ մասի: Սրոհունդը չորացնում են քամոտ վայրերում: Չորացրած բույսը կազմում է նախնական բույսի 25%-ը, չոր բույսը ունենում է դառը համ, կարելի է օգտագործել 3 տարի:

Ավիցեննան բացահայտել է, որ այս բույսի սերմերից պատրաստված յուղը՝ կաթիլների ձևով, կարելի է օգտագործել մանկական պրակտիկայում՝ լսողության խանգարումների դեպքում: Նա նաև բացահայտել է բույսի միզամուղ, վերքամոքիչ և ցավազրկող հատկությունները: Դեղաբույսը օգտագործվել է դժվար լավացող վերքերի, խոցերի և այլ հիվանդությունների բուժման համար:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):